

17446

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԵՐԵՆԻԿ ՏԷՐ-ԲԱՐՈՆԵՂԵԱՆԻ

Ս Ի Ն Ե Ա Ն



ԴԻԻՑԱԶՆԵՐԳ



Պ Օ Է Մ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Պրոգրեսս» Լ. Պողոսեանի, Լորիս-Մելիքեան փ. 1.

1 9 1 9

891.99

Ս-51

1/1

11111


301-99
U-51

Պրոպագանդայի բաժնի քարտ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԵՐԵՆԻԿ ՏԷՐ-ԲԱՐՈՆԴԵԱՆԻ

3/10 1919

Ս Ի Ն Ե Ա Ն - Կ



ԴԻԻՑԱԶՆԵՐԳ

ՊՕԷՄ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Գրգռէս» Լ. Պողոսեանի, Լօրիս-Մեղիքեան փ. 1.
1919

Նւիրում եմ —
Ազատության, համարտության
և գեղեցկության համար
Ողջակիզող ցեղիս
Ազատամարտի
Դիցազնանեղ բանակին:



102.867 - ԱԶ

(3363 - 2007) 1748 - 2007

ԴԻԻՅԱԶՆԵՐԳ

Պ Օ Է Մ

1.

Վերջապէս հասաւ երկիրը պաշտած խաւարից փախչող
ցեղն հեքեթածին,
Իրա կանացով և վրբաններով, հօտերով հազար
— հովիւ-ժողովուրդ:
Զարկեց իր վրբանը ծաղկոտ դաշտերում, կանաչ սարերի
փէշերի վրայ
Հօտերը փռեց... Երկիրը փարթամ շոյում է, կանչում,
բերկրութեամբ անհուն,
Քաջ արունների ցնծում է հոգին արեւից այրւած,
արեւակարծ...

Արեւածէգին դուրս եկաւ անա մեծ նահապետը
առասպելական, —

Խոժոռ ու հուժկու և քաջագանգուր մի հրսկայ արու
 հըրածին հոգով,
 Ինքն աղեղնաւոր, գլխին—սաղաւարդ հաստ կաշւից շինած,
 զոտքից կախ եղջիւր,
 Ու աղօթում էր այսպէս այն հըսկան, մեծ ցեղապետը
 իր հայրենիքին—
 ,,...Ու օրհնում եմ ես հողդ անարատ ու երկինքըդ վեհ
 և գեղութիւնդ,
 ,,Ու քո թովչալի կուսական ծոցում բընութեան ազատ
 այս շունչն եմ պաշտում..
 Եւ արեապաշտ այն ցեղը ազնիւ հըրճանքով լըցւած,
 հոգին լոյսի մէջ,
 Երկիրն էր օրհնում ու փառաբանում—բուռն ժողովուրդ,
 արեակարծու...

2.

Առասպելական մեծ աշտարակը բիւր հեքիաթներին
 շըղարշով ծածկւած,
 Թաղւած մըշուշում, ողբում էր կարծես—երկինք հասնելու
 յոյսերը հանգած...
 Ահա նըրա տակ մարդկային հազար ամբոխներ կանգնած—
 այլացեղ բանակ—
 Արիւնաթաթաւ ու արիւնախում, աւերոյ, քանդոյ —
 մի մութ փոթորիկ,

Որ աստւած չունի, սրբութիւն չունի, աշխարհում միայն
 մահ երկրպագոյ,
 Ու որի անցած ճամբէն է մոխիր, աւեր ու արիւն...
 անթաղ մեռելներ...

Ու բաբելոնեան հրսկայ շէնքի տակ վայրի ցեղերի
 յաղթողը հրսկայ,
 Առասպելական, մեծ բըռնակալը, արքան խաւարի
 և քուրմը մահւան
 Բանակ է դարկել... մարդկանց ամբոխներն և հորդաները
 ուխտում են նըրան...
 Կանգնած է Բէլը անշարժ, քարացած, հայեացքը դէպի
 մըշուշոտ հեռուն... —
 Հիւսիսում ձգւող լեռների շղթան... հեռուն անթափանց,
 անծանօթ ու մութ...
 ,, — Այդ ուր նա անցաւ... և ուր թագնւեց ձիւնոտ լեռների
 ցուրտ ձորերի մէջ...
 Այո, ուր անցաւ... այն բուռն ցեղը յանդուգըն հոգով
 և ազատասէր.
 Բըռնութեան շղթան փըշրել էր ըմբոստ, փախչում էր դէպի
 ազատըն հիւսիս...
 Տիտանը հըզօր շըշմած էր տեղում ապստամբւած ցեղի
 արարքից ըմբոստ,—
 Ու անգուսպ կըրքից աչքերից նըրա հոսում էր կաթ-կաթ
 արիւնը թունոտ,

Եւ բռնակալի արինաճարաւ մարդակեր հոգին
 ծարաւեց խորունկ.
 „—Պէտք է շնչւի այդ ազատատենչ մի բուռն ցեղը
 —խորհում էր հսկան—
 „Արեւ է տենչում և կուռքը նորա ազատութիւն է—
 —պէտք է նամեռնի...“

3.

Երկրորում չըջնալ արեւը ծագեց և կեանքը զարթնեց
 զլարթուն, կայտան,
 Անխոնջ, եռանդուն և աշխատաւոր ժողովուրդն ահա
 ջրանցի է շինում.
 Սարերի միջով, դաշտերով անծիր ճամբայ են կերտում
 հոսանքի համար,
 Ձարնում են մուրճերը-ժայռերը փրշրում, փորում են հողը,
 պատեր կառուցում—
 Ճամբայ են շինում ջրերի համար, ջրանցքի ճակտին
 քարերից տաշած՝
 Կամարներ դնում և վարպետները քարերի կըրծքին
 նկարներ քերտում...
 Ձարթնել է կեանքը նոր հայրենիքում, եռում է աշխոյժ,
 անդադրում շինում...
 Արեւից այրած եփում է հոգին ապրելու կոչած
 այն բուռն ցեղի:

Ու ահա յանկարծ փողեր են հնչում, կանչում են մարդկանց
 խորհրդաժողով...

4.

Մեծ նահապետի ընդարձակ բակում ժողեցան բոլոր
 հայրերը ցեղի.
 Անխոս, անմըռունչ կանգնած են նրանք, դէմքերին—կրրակ
 սրտերում—յուզմունք,
 Մի խորրդաւոր հայեացք է ձգում ժողովի վրայ
 մեծ ցեղապետը,—
 Մըտքերը մըռայլուղում են, տանջում... ու ձայնով խըրոխտ
 պատմում է հրսկան.
 „—Անկուշտ ու անյագ բռնակալ հրսկան մեզ կեանք է
 շնորհում, կեանք է խոտանում,
 Եթէ ուրանանք արեւը, լոյսը, խաւարը պաշտենք,
 յետգառնանք —խաւար՝
 Նայում է հրսկան քաջ արուններին և նըրանց հըպարտ
 դէմքերի վրայ
 Կարգում է ահա վըճիւր արգար, կամբը աներեր
 լուսատենչ ցեղի.
 —Պէտք է մաքանել .. այսպէս է դատում այն ցեղը ըմբոստ
 և ազատասէր
 Պէտք է մաքառել, ուրիշ ելք չըկայ, այս է մեր ուղին,
 մեր դաւանանքը—

Եթէ չենք ուզում ապրել լոկ միմիայն ապրելու համար,
եթէ մեզ համար—
է՛լ աստուած չըկայ, քան միմիայն վերին արևը անմահ,
—պէտք է մաքառել...
Անշէջ տառերով գրած է այսպէս այն արևապաշտ
ցեղի հոգու մէջ:
Եւ սուրբ հանեց հրական պատեանից—ծընկաչոք ահա
այս սրբի վրայ
Ուխտում եմ քաջերն յաւիտեան կըուել արևի համար
արևի համար...

5.

Ու Բէլը, հրական, առասպելական իր հօրգաներով
շարժըեց ահա—
Եւ նրա հետեից—սև սուերը մահու-երգելով նըրան
փառաբանութիւն,
Ու նըրա անցած, մոխրացած ճամբին թափելով նըրան
պըսակներ հազար...
Առաջ է գընում մեծ Ոճրագործը, գիւային հոգին
արիւնով հարբած,
Եւ ուղղեկիցը միշտ հետևում էր ու միշտ անբաժան
երգերով իր սև...
—Գիւղը այրւած, աւեր, ամայի ու խրճիթներում
գայլեր են ոռնում...

—Խողխողւած հովիւը ընկած է ահա, գեղջկուհին ժառաղ
—անարգւած, անշունչ...
Գընում էր այսպէս՝ Բէլի հետեից երգելով նըրան
փառաբանութիւն...
Ու հոյակառոյց ջրանցքի վրայով քշում էր հրական
իր նախճիրները,
Թողնելով միայն մոխրի կոյտեր, գիւղերից զըւարթ—
գերեզմանոցներ...
Եւ հալածական երեխայ ու կին—անմեղ ժողովուրդ—
ողջ փախչում էին...
Գընում էր առաջ այն ազատ ցեղին բընաջնջելու
անիծեալ տենչով...
Իսկ նըրա զիմաց կանգնած էր միայն բուռն ժողովուրդ
լուսեղէն հոգով...

6

Մեր այն մեծ, սուրբ զոհե-
րին, զոհերի գնդին, որ ընկան
հայրենիքի ազատամարտի ան-
մոռանալի ճակատամարտերում:

Աստղոտ գիշերին, աստղերով վառւած քաջերի մի գունդ
գիշերով կերթար,
Մեծ ուխտը սըրտին—արևի ուխտը—դէպ ազատամարտ
գիշերով կերթար...

Հին ցեղի ազնիւ, վեհ գաւաղներէ մեծ աղեղնաւոր
մի գունդ էր, կերթար,
Սուրբ երազներով մոլեգին ու խենթ—սըրբազան կըսիւ
արեւի համար .

Ազատամարտի դաշտերին իջանլոյսերը դանդաղ...
ու ընկած է նա...
Վեհ մարտիկներէ ընկած է գունդը... լոյսը աչքերում
խաւարել, մարել,
Կըրճքերի վըրայ վէրքերը սառել և շրթունքներին—
աղօթքը վերջին .
Ողջակէզ գընդի արիւնն է միայն անմահ կըմխայ
սեղանի վըրայ
Արև-աստրծոյ... Արև-աստրծոյ քանդակի քարին
զըրուում են անհ
Անուաններ մէկ-մէկ, արիւն գոհած սուրբ հողիներէ
անուաններ անմահ...

Ու ցեղը այսպէս՝ զոհերի նամբէն բռնել էր, կերթար
դէպ ազատութիւն...

7.

Ու Բէլը, հըսկան, առասպելական մեծ բրոնակալը
մօտեցաւ անհ
Բրնաւէր ցեղի վերջին ամբողջին... նեցուկին վերջին
ու վերջին յոյսին...
Աւեր երկրի երկնակամարում աստղերը բոլոր
մարեցին, հանդան...
, — Մեզ փրկանք չըկայ ու բաց է միայն սե՛ մահու ճամբէն
— խօսում էր հըսկան,
Մեծ ցեղապետը—մահըն է այսօր դարձել մեր կամքը,
իդձը դարաւոր...
Կարծես թէ մահն է, որ մենք պաշտել ենք, կոչելով նորան
—,,սվ ազատութիւն...,,
Մեռնելու համար, կարծես, ուխտել ենք, երազել մահը
ու մահը երգել...
Խօսում էր այսպէս Հըսկան վեհապանծ արցունքն աչքերին,
ճայնով անվատ...
Նայում էր ցեղի մընացորդների շարքերին սակաւ—
մի բուռն քաջեր...
Աչքերում հրդեհ, յուսավառութիւն և արեակէզ
դէմքերին — կորով...

Քաջ արուսների շարքերը սակաւ կանգնած են տոկուն,
աներեր ու պինդ.
— Պէտք է մեցն երթամք արեւի նամբով, անմահայն ճամբով,
սրով եկել ենք,
Ու պիտի երթանք մինչև վերջ այսպէս եթէ կուզ նոյն իսկ
վեր կեանքի գընով,
Թէկուզ մինչև մահ... ու մահն էլ լինի արեամարտի
ելքը միակ դաժան:

Ու ցեղը մըղեց կըռիւր վերջին, մի հեքեաթ դարձաւ
կըռիւր վերջին.
Ու վիժում էին շարքերը հըրէ հրաշագործելու
խելագար տենչով...
Թահաւան երկունքում՝ գերբնացած ցեղի գոյութեան կըռի
առասպելներում—
Վառվում է յանկարծ փրկութեան ուղին, լուսաւորուղին
հեքիաթէ կըռում...

8.

Եւ բըռնակալի յօշոտած սև դին արիւնաթաթաւ
փըռած է գետնին,
Նիզակը անգութ մըխել է գետնին, յաւիտեան մըխել
մահաւան ճակատին...

Եւ շրթունքներին սառել է վերջին շունչը հըսկայի
ու վերջին կիրքը,
Անիծեալ, լըկտի փափազը վերջին... սառել են, մեռել
դաւերը բոլոր...
Եւ արևի տակ փըռած նըրա դին, այլանդակ, դաժան
հոտում էր, լուծւում...

Ու վերադարձան վաթանը իրանց այն արեւապաշտ
ցեղի մնացորդը —
Փարեցին մանկանց, մատաղու սիրուն, ջերմ համբոյրներով
օրհնեցին նրանց —
,,— Այժմ գնացէք, բաց է և ազատ լուսաւոր ուղին
դէպի արեգակ,
Մեր սուրբ արիւնով այն ուղին բացինք ձեւ երթի համար
դէպի արեգակ:



17446

944

500



2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0066609

ԳԻՆԸ 2 Ր.